

- աւաղ զայն բարեւի մեծ գեղերն եւ ջրալի :
 Եւ Սեւաստ էր մեծ , լայն եւ ընդարձակ ,
 մարդաշատ եւ բարօք լի . հացն , միսն , կաթն
 ու մածուն , կարագն առատ . բայց միրզն եւ
 10 դինին նուազ , զի ցրտային եւ ձմեռնային էր :
 Եւ կայր երկու եկեղեցի , մինն՝ Սուրբ Աս-
 տուածածին , միւսն՝ Սուրբ Սարգիս . եւ քա-
 հանայքն ուսեալք , բայց հպարտք եւ զոռոզք .
 եւ ժողովուրդքն յոյժ երկիւղած եւ հեղ : Ասին
 15 թէ ԲՈՒ խանայ էր , իսկ այժմ ԶԾ տուն . այլն
 ցիր ու ցան եղել են : Եւ քաղաքիս բոլորն
 մեծ երմախ մի երթայր , որ կոչէր Խզըլ Երբ-
 մախ . եւ այլ գետեր կ'երթայր քաղաքի մի-
 ջոյն : Եւ ունէր երկու հիսար եւ ամրոց պա-
 20 տուական . եւ քաղաքէն դուրս Քառասուն
 Մանկանց , տեղն , լիճն եւ բաղնիքն . ապա
 ջուրն ցամքել էր : Եւ աւուրն մի ճանապարհ
 փառաւոր եկեղեցի մի վանք՝ Հրեշտակապետ
 անուն , որ ունի իրեք վանք , վարդապետ մի
 25 Մելքիսէթ՝ առաջնորդ¹ : Եւ կային չուրջ

6 աւախ : բարէլի : — 9 կարաքն : — 15 յայժմ :

¹ Սա է անշուշտ «Մելքիսէթ եպ. Սեբաստացի», որ 1602ին փրկանաւորած եւ նորոգած է էջմ. 1875 նա-
 րեկը : Յիշատակագրութեան մէջ կը կարդամ տողիս
 (թղ. 229ր) . «Զի յայսմ ժամանակի . . . ել ժանտարարոյ
 եւ պիւղծ թիւնաւոր մի տաճիկ Ղարայ Աղիճի անուն ,
 ի հիւտոսու (ա՛յսպէս) կողմանէ եւ եկն ի վերայ Աե-
 փասախ քաղաքին . եւ աէրն Սեփաստիւս բերթին
 Մահմատ փաշան դեռ մանուկ զուով երկեաւ ի նմանէ
 եւ զօղեցաւ բազում եւ անթիւ հեծելաւք ի մէջ բեր-
 դին . եւ ամրացան ինքեանքն եւ մասնեցաւ քաղաքն
 եւ երկիրն մարզով եւ անասնով , ընչուքն եւ ապրա-
 նաւքն ի ձեռն արեանարբու գաղանին , որ անխնայ կո-
 տորեաց բազում քրիստոնեայս . եւ զմանկունս նոցա